



թ. 29. Տաղարամ 1752ի, էջ 2.

հրատարակութիւններ ինքնաբաւ, ինքնապահ չեն: Քիչ անգամ Հայ հրատարակութիւնը մը շահաբեր է, աւելի յանախ հագիւ ինքնաբաւ, իսկ ընդհանրապէս վնասաբեր: Ուրեմն տղայական պիտի ըլլար ակնկալել որ Հայ գծագրիչներ կամ հրատարակիչներ խորհէին ըստ պատշաճի պատկերազարդել Հայ հրատարակութիւններ: Մեր մօտ շէնք շնորհք լուսանկարներու արտատպութեամբ գոնէ զարգարուած հրատարակութիւններ նոյնպէս շատ հազուագիւտ են և միայն վենետիկի Մխիթարեաններու հրատարակութիւններէն ու մանց երես կը ճերմկցրեն:

Հայ հրատարակութեան գործը աւելի շահաբեր կրնանք նկատել անցեալին մէջ, իսկ այժմ ամենահասարակ թերթաման հրատարակութիւններ են որոնք շահ մը կը բերեն հրատարակչին որ երբեմն աւելի ներկայանալի հրատարակութեանց ձեռք կու տայ, այլ սակայն ոչ այնքան նիւթական յաջողութեամբ:

Անշուշտ ես աւելի անցեալով հետա-

քրքրուելուս՝ կ'ուզեմ շեշտել որ Հայ տրպազրութեան, հրատարակչութեան, պատկերազարդութեան ճիւղերը այնքան ալ անհամ նիւթեր չեն, ընդհակառակն կը պատահի որ ուսումնասիրողն հանդիպի իրապէս յուզող դէպքերու, զմայլելի հրատարակութեանց, հետաքրքրական զարդերու և պատկերներու: Սակայն այդ ամէնուն մասին, ինչպէս ըսի, չունինք ընդարձակ, մանրակրկիտ, ճշգրիտ պատմութիւնը, որմէ օգտուելով առանց աւելորդ յոգնութեան՝ գեղարուեստի ուսումնասիրող մը գտնէ իր յեցակէտը և զայ եզրակացութեան մը, տալով ուղիղ և յստակ վերլուծում մը Հայ արուեստի այս փայտափորագրական ճիւղի մասին:

Մեր տուած այս փորձէն կ'երեւի թէ այդ գեղարուեստի ճիւղին անցեալին մէջ ճիգ և ջանք չէ պակսած, և եթէ նկատի առնենք այն պայմանները որոնց ներքեւ Սերաստացի Յակոբ մը կամ Էջմիածնեցի Տիրացու Յարութիւն մը ջանացած են պատմութեան նիւթ թողուլ մեզի, պատմութիւնս՝ Հայ փայտափորագրութեան, այն ատեն կարելի չէ որ ուսումնասիրողը չզար-



թ. 30. Տաղարամ 1752ի, էջ 296.